մեծամեծ ՀԱՍՍՈՒՑ և տուգանաց, որպէս գրեցաք 'ի նախընթաց գլուխդ։ Սակիզբն արասցուք պատմել զվէճս եւ զխռովութիւնս ազգին Վրաց, որպէս աւանդի 'ի ձեռագիր յիշատակարանս. յարելով նաեւ զթարգմանութիւնս հրովարտակաց և դատաստանական գրոց, զորս առեալ է Մարտիրոս վարդապետ։ Տե՛ս Նոթ՝ 'է Գիրս Հանոյ վարդապետի. Պոպ. Երուսաղէմ. Երես 225։

Արդ, մին 'ի վաճառականաց Եգիպտոսի Դայիպի անուն, որ էր մտերիմ Սուլթանին, դէպ եղեւ սմա գնալ 'ի կողմանս Վրաստանի 'ի գործ վաճառականութեան, և 'ի հասանիլ նորա 'ի Տփխիս, պատիւ մեծ ցուցին թագաւորն Իվանէ եւ իշխանք իւր, իմացեալ թէ նա սիրելի է յաչս Սուլթանին՝ որսային զնա 'ի կամս իւրեանց ընծայիւք և պատարագօք. եւ ծանր խոստմամբ առաջի եդին նմա առաքել առ Սուլթանն սմ՛ յամէ ծանրագին ընծայս եւ պատարագս. ծառայս եւ աղախնեայս, ապահարկ առնել զաղգն Թուրքաց, որ ընդ իշխանութեամբ իւրեանց, նորոգել զհնացեալ մզկիթս նոցա, արձակել զգերիսն, կալ դաշինս սիրոյ և խաղաղութեան ընդ Սուլթանին, և կալ ընդ հնազանդութեամբ նորին, եթէ համեսցի ինքն լինել միջնորդ առ նա՝ և շրջել զկամս նորա. առնուլ 'ի ձեռաց Հայոց զԳողգոթայն տեղի Խաչելութեանն Քրիստոսի, և տալ Վրաց. հաւանեալ վաճառականին՝ խոստացաւ առնել ըստ կամաց նոցա։ Եւ եղեւ 'ի դառնալ վաճառականին յԵգիպտոս, յանդիման լինել Սուլթանին, յետ այլոց բանից՝ յայտ արար և զինդիր թագաւորին Վրաց և իշխանաց նորա, թէպէտ և խոժորեցաւ Սուլթանն և դժկամակ եղեւ ընդ բանս նորա. սակայն ջանաց նա շողոքորդ բանիւք որսալ զմիտս նորա, հայեցուցեալ 'ի խոստմունս Վրաց և 'ի մարմնաւոր մեծութիւնս։ Հաւսկ ուրեմն զիջաւ Սուլթանն Մէլիք Աշրաֆ 'ի կամս նորա. գրեաց հրովարտակ առնուլ զԳողգոթայն 'ի ձեռաց Հայոց, և տալ Վրաց, որ և եղեւ սուգ անտանելի եւ արտմութիւն անվախթար Հայոց ազգին։ Տեսեալ Մարտիրոս Եպիսկոպոսի թէ չիք օգուտ կաքել ընդ այլազգիս և ընդ Վիրս յԵրուսաղէմ, մանաւանդ տեսեալ զյափշտակութիւն վիճակին իւրոյ, արիացաւ և զգեցաւ զզօրութիւն 'ի ծերութեան իւրում՝ յանձն